

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
14 հունիսի 2004 թ.
Պետական գրանցման թիվ 10204163

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

7 հունիսի 2004 թ.
ք. Երևան

N 80-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ
ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԿՆԻՔԻ
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի

Հրամայում եմ

1. Հաստատել հարկադիր կատարողի համազգեստի, տարբերանշանների, խորհրդանշանի
նկարագրերը, դրանք կրելու և հատկացնելու կարգը, վկայականի և կնիքի միասնական
նմուշները՝ համաձայն թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արդարադատության նախարարի 1999 թ. ապրիլի 27-ի
«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների
ծառայողական համազգեստի, դասային կոչումների տարբերանշանների և խորհրդանշանի
նմուշները հաստատելու մասին» թիվ 692 հրամանը:

Դ. Հարությունյան

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
7 հունիսի 2004 թ.
թիվ 80-Ն հրամանով

Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ
ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

(ՀԱՎԵԼՎԱԾՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԵԼ Է՝ 01.03.05 N 26-Ն)

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
7 հունիսի 2004 թ.
թիվ 80-Ն հրամանով

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԿՐՄԱՆ ԿԱՐԳԸ

(ՀԱՎԵԼՎԱԾՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԵԼ Է՝ 01.03.05 N 26-Ն)

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
7 հունիսի 2004 թ.
թիվ 80-Ն հրամանով

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վկայականի կազմը կարմիր գույնի է, արտաքին կազմի վրա ոսկեգույն ՀՀ զինանշանն է և ոսկեգույն տառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, կազմի հակառակ կողմի վրա ոսկեգույն տառերով գրված է «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ, МИНИСТЕРСТВО ЮСТИЦИИ»:

Միջուկը երկկողմանի է՝ 9x6 չափսի, կարմիր վանդակավոր դաշտի ֆոնի վրա՝ ՀՀ զինանշանի պատկերով, ձախ կողմում անձի լուսանկարն է 3,5x4,5 չափսի՝ նշվում է գերատեսչության անվանումը, ծառայության անվանումը, վկայականի համարը, հրազեն կրելու իրավունքը և ուժի մեջ գտնվելու ժամկետը:

Աջ կողմում նշվում են անձի տվյալները (ազգանուն, անուն, հայրանուն). հատուկ կոչումը, պաշտոնը և այն վավերացվում է նախարարի ստորագրությամբ և կնիքով:

Բոլոր գրառումները կատարվում են հայերեն և ռուսերեն լեզուներով:



Հավելված 4

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
7 հունիսի 2004 թ.
թիվ 80-Ն հրամանով

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻՆ ՏՐՎՈՂ ԿՆԻՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՄՈՒՇԸ



Հարկադիր կատարողի կնիքը շրջանաձև է, 33 միլիմետր տրամագծով, կնիքի ներսում առաջին տողում մեծատառ գրված է «ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՀԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Երկրորդ տողում գրված է «_____ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՐԿԱԿԻՐ ԿԱՏԱՐՈՂ» բառերը, իսկ կենտրոնում՝ փոքր շրջանագծի ներսում, գրվում է թվանիշը:

Ձե-1



**Գլխավոր և առաջատար
խմբի գլխարկանշանը**

Ձե-2



Բարձրագույն
խմբի գլխարկանշանը

ԴԱՀԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆՍՈՒՇՆԵՐԸ

Ձև-3



Ամենօրյա
գարնանային-աշնանային


Ձմեռային

ԴԱՀԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ
ՆՍՈՒՇՆԵՐԸ

Ձև-4



Ամենօրյա
գարնանային-աշնանային



Ձմեռային

ՁԵ-5

*ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ*



